Ավետիք Իսահակյան

Օրը տըրտում, սև է անցնում

Օրը տըրտում, սև է անցնում,
հույս է վաղվան օրվան վըրա.
Վաղվան օրն էլ սև-ամպի պես
եկավ, նստավ սըրտիս վըրա.
Հիմա դարձել, ափսո՞ս կասեմ.
անցած օրին երնեկ կուտամ.
Ափսո՞ս կասեմ դալար կյանքիս,
որ շուտ ընկավ հարքաշ ճամփա:

Ու օրերիս քարավանը
տըխուր-տրտում առաջ կերթա.
Հազար ցավով, մարդկանց ցավով
ծանըր բեռնած ճամփա կ՚երթա.
Ա՞խ, օրերիս քարավանը
աչքը՝ կարոտ, սիրտը՝ կարոտ.
Ու աշխարհիս ցավով բեռնած
էս աշխարհով կ՚անցնի, կ՚երթա.

Ու մի օր էլ չոր հոլի մեջ
քարավանս կի՛ջնի դադրած,
Վար կըդնե մեջքի բեռը
-Կյա՛նքս, կյա՛նքս մոխիր դառած.
Ա՞խ, օրերիս քարավանը

աչքը՝ փափագ, սիրտը՝ պապակ,
Փուչ աշխարհիս ցավով բեռնած
էս աշխարհով կ՝անցնի կ՝երթա.

Քարավանը երբ որ իջնի,
ես ինձ ու ինձ հաշիվ կանեմ,
Թե ո՞ւր հասա, թե ի՞նչ տեսա,
ինչո՞ւ եկա էս մեծ ճամփեն.
Շա՜տ դադրեցա, շա՜տ չարչարվա,
հաշիվ անեմ, շահը ինչ էր.
Ախը ինչո՞ւ ոտ դըրեցի
էս սուր ու փուչ, դժվար ճամփեն:

Ծովը ընկած մարդու նման
նամարդ օձից կախ ենք ընկել. –
Նամարդ օձը էս աշխարհն է,
- ու աշխարհին աչք ենք գըցել.
Ա՜խ, աշխարհից մի հույս չըկա.
ճիճուների ենք կերակուր.
Մի բուռ հողն է բաժինը մեր՝
թե տեր դառնանք աշխարհին էլ:

Ա՜խ, մերիկնե՜ր, հող պիտ դառնաք,
Ինչքա՞ն սըրտեր հող են դարձեր,
Ազիզ սըրտեր, խորունկ սըրտեր
Սիրով վառվեր, հող են դարձեր.
Ձեր բալեքը, ընկերներըս,
Մեր սըրտերեն ելան, թըռան.
Ա՜խ, ամենքն էլ էս աշխարհի
Անգութ կամքով հող են դարձեր…

Էս աշխարհը արունքտեր է,
ո՛չ գութ ունի, ո՛չ խիղճ ունի,
Է՜հ, աշխարհն էլ ցավող չ՝ունի,

մահացու է ու վերջ ունի.
Ու մեզի պես հողեղեն է,
ու մեզի պես մահկանացու.
Մեր գերեզմանն ինքն է հիմի,
ու գերեզման ինքն էլ ունի:

Հազար ափսո՜ս ծաղկունանցը,
նազուկ լուսնին, - պիտի թոռմին.
Մով ծովերը, մով սարերը
սև ծլխի պես պիտի անցնի՜ն.
Վառ արևը պիտի մարի,
զառ աստղերուն հազա՜ր ափսոս.
Հրրեղեն ձին, բլբո՛ւլ, մարա՛լ,
հե՜յվախ, մեռնի՜ն, անցնի՜ն:

Թե աշխարհը, ամեն մարդ
ծընավ – եկավ, մեռնի – կ՚երթա.
Թե անցորդ ենք, չարքաշ ճամփորդ,
երերմընի, փըշի վրա,
Ո՞ւմ հարցընենք՝ մեզի ասե,
- էս երա՞զ է, թե արթուն բան,
Որ մենք եկանք, հիմի կ՚երթանք.
- խաբա՛ր չըկա, խաբա՛ր չըկա:

Է՜յ անցավոր, ցավի աշխարհ,
ցավըդ բարձած մեկ-մեկ կ՚երթանք.
Ինչո՞ւ եկանք, ինչո՞ւ կ՚երթանք.
մեզ հարցըրեք, մենք խաբար տանք.
Ցավերու տակ մեռա՜նք, մեռա՜նք.
երնե՜կ էնոր, որ չի զգա.
Հազար ափսո՜ս, որ ծընվել ենք,
չըծնվածին երնե՜կ կուտանք:

Ա՜խ, խոր կըզգամ, որ աշխարհում
մարդն է մենակ, որ դարդ ունի
Մարդու վերքը, մարդու ցավը
ո՛չ տակ ունի, ո՛չ չափ ունի.
Է՜յ անցավոր, անսիրտ աշխարհ,
քեզի հազար երնե՜կ կուտանք,
Որ չես զգա քու մեծ վերքը,
որ տակ չունի, որ չափ չունի:

Մեր խեղճ երգն է մենակ ճարը
անմըխիթար սըրտի համար.
Մեր խեղճ երգն է քու մեծ վերքի
խոր մըրմուռը, ունայն աշխա՛րհ.
Երազի պես եկա՜նք-կ՚երթանք,
երազի պես դուն էլ կ՚երթաս,
Մարդուս կյանքն էլ ցավիդ երգն է,
մարդըս երգ է, երա՛զ-աշխարհ…

1900
Քյուսնախտ